

## Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



# ՏԵՂԵԿԱԹԵՐԸ #2

Փետրվար 2019

Երևան, Հայաստան



# Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Մենդի վերամշակում.....	3
Տեքստիլ արտադրություն .....	4
Շինարարություն .....	6
R&D .....	7
Տեղեկատվական տեխնոլոգիաներ .....	8
Կոսմետիկա.....	9
Առողջապահություն .....	10
Այլ ոլորտներ .....	11
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	13
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	14

# Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-ների միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՅ Հայաստանը ուշադրությանն է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

## Մանդի վերամշակում



### Գործարար համագործակցության առաջարկներ

Հոլանդական ոչ ալկոհոլային խմիչքներ արտադրող ՓՄՁ ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ Եվրոպայում, ԱՄՆ-ում և Մերձավոր Արևելքում:

Գործընկերները պետք է ունենան մասնագիտացված հյուրանոցային, հուշանվերների խանութների և/կամ խմիչքների խանութների ցանց: Առաջարկվում է նաև վաճառքի և մարքեթինգի աջակցություն: Ընկերության արտադրանքը՝ «մոկտելները» շատ առողջարար են, ալկոհոլի համով, 100% բնական և վեգան, ինչպես նաև առանց շաքարավազի և արհեստական համեմունքների:

Ծածկագիր. BONL20190130001

Մակեդոնական ընկերություն, որը մասնագիտացած է բնական մթերքների մեծածախ առևտրում, փնտրում է գործընկերներ մատակարարելու իր պահածոյացված մրգերը և բանջարեղենները: Ընկերությունը հետաքրքրված է մատակարարման ծառայությունների համաձայնագրերով:

Ընկերությունը շահագրգռված է համագործակցել սննդամթերքի մեծածախ և մանրածախ առևտրով զբաղվող ընկերությունների և միջնորդների հետ, որոնք ցանկանում են իրենց ապրանքները վաճառել իր շուկայում՝ մատակարարման համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. BOMK20180926001

### Գործարար համագործակցության հարցումներ

**Լեհական մասնավոր ընկերությունը փնտրում է պահածոյացված, սառեցված, չորացրած մրգերի, բանջարեղենների և այլնի մատակարարներ:**

Լեհաստանի հարավից՝ Մալոպոլսկայից լեհական ընկերությունը ավելի քան 25 տարի գործում է սննդամթերքի շուկայում և բաց է համագործակցության բոլոր առաջարկների համար: Ընկերությունը հետաքրքրված է ինչպես պահածոյացված, սառեցված, չորացրած մրգերի և բանջարեղենի փոքր և անհատ մատակարարներով, այնպես էլ մեծածախ մատակարարների կանոնավոր պատվերով՝ կախված արտադրանքի տեսակից:

**Ծածկագիր. BRPL20190104001**

## Տեքստիլ արտադրություն



### Գործարար համագործակցության առաջարկներ

**Հագուստ արտադրող իտալական ընկերությունն արտադրական և ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո առաջարկում է իր ծառայությունները:**

Իտալական կոռպերատիվը տղամարդկանց և կանանց համար նախատեսված հագուստի, ինչպես նաև խոհանոցային պարագաների և սրբիչների արտադրող է: Միջազգային շուկայում իր դիրքը ընդլայնելու նպատակով ենթապայմանագրային և արտադրական համաձայնագրերի ներքո փնտրում է հագուստի ոլորտում ներգրավված միջազգային գործընկերոջ (հագուստ արտադրողներ և դիզայներներ):

**Ծածկագիր. BOIT20190124001**

**Պրեմիում դասի տղամարդկանց նորաձև հագուստ արտադրողը փնտրում է գործընկերներ առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո**

Բարձրորակ հագուստ արտադրող ռումինական ընկերությունը, որը գտնվում է Ռումինիայի

հարավ-արևելքում, ունի մեծ փորձ տեքստիլ արդյունաբերության ոլորտում, ունի ավելի քան 20 տարվա աշխատանքային փորձ և լավ հայտնի է միջազգային ապրանքանիշերի շրջանում: Ընկերությունը փնտրում է փորձառու դիստրիբյուտորներ (միատեսակ կամ բազմատեսակ նորաձևության խանութներ): Ընկերությունը նաև հետաքրքրված է առևտրային համագործակցությամբ՝ բրենդի ներկայացման միջոցով:

Ծածկագիր. BORO20190204001

## Գործարար համագործակցության հարցումներ

**Շվեդական ընկերությունը փնտրում է կանանց սպորտային հագուստ արտադրող փորձառու գործընկերոջ:**

Սկանակ Շվեդական ընկերությունը նախատեսում է արտադրել կանանց ֆունկցիոնալ սպորտային հագուստ և փնտրում է արտադրող՝ իր առաջին հավաքածուի համար (գուգագուլպաներ, վերնաշապիկներ): Սկզբնական շրջանում պոտենցիալ գործընկերը քիչ քանակությամբ կարտադրի, բայց պետք է ունենա համապատասխան հնարավորություններ և ռեսուրսներ հետագայում ընդլայնելու արտադրության քանակը:

Ծածկագիր. BRSE20181220001

**Շվեդական ընկերությունը փնտրում է կոշիկի արտադրող, ով կարող է արտադրել պաշտպանիչ կոշիկներ պատրաստված թեթև և ամուր պոլիմերային հյուսվածքից:**

Շվեդական ՓՄՁ-ն մշակել է նոր պաշտպանիչ կոշիկ (ռետինե գալոշանման կոշիկներ), որը կարող է օգտագործվել սովորական կոշիկները վատ եղանակային պայմաններում պաշտպանելու համար: Ընկերությունը կոշիկի առաջին շարքը արտադրելու համար փնտրում է թեթև պոլիմերային հյուսվածքների/գործվածքների մատակարարի և կոշիկ արտադրողի: Գործընկերը կամ գործընկերները պետք է պատրաստ լինեն քննարկելու առավել արդյունավետ կատարման միջոցները, ներառյալ նախագծում/դիզայն և հյուսվածքի (կյուրի) ընտրություն և աշխատել արտադրական և ենթապայմանագրային համաձայնագրերով:

Ծածկագիր. BRSE20190204001



## Գործարար համագործակցության առաջարկներ

### Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալներ Եվրոպայում

Պողպատ արտադրող և ինժեներիայի ոլորտում գործող ընկերությունը փնտրում է առևտրային գործակալներ Եվրոպայում՝ ապահովելու առևտրային գործակալության համաձայնագրի շրջանակներում շարունակական միջազգային ընդլայնումը: Ընկերությունը կարող է տրամադել կոմպլեքս տեխնիկական լուծումներ ինժեներիայի, արտադրության, մակերեսների վերանորոգման, հիդրավլիկայի և այլ կարևոր արդյունաբերական ոլորտներում՝ ներառյալ օֆֆշորային և ծովային, ինչպես նաև նավթի և գազի արդյունաբերության ոլորտներում:

Ծածկագիր. BODK20180130001

## Գործարար համագործակցության հարցումներ

**Շինանյութեր, դեկորացիոն նյութերի մեծածախ և մանրածախ առևտրով զբաղվող լիտվական ընկերությունն առաջարկում է տարածման ծառայություններ:**

Ընկերությունը Լիտվայից, որը գործում է շինանյութերի մեծածախ և մանրածախ առևտրում, ցանկանում է ընդլայնել իր արտադրանքի ծավալը, ուստի փնտրում է ֆասադների մեկուսացման և հարդարման նյութեր արտադրողներ և առաջարկում է տարածման ծառայությունների համաձայնագրեր:

R&D



**H2020: EIC-FTI-2018-2020 – Իտալական ընկերությունը փնտրում է տոխնոլոգիական գործընկերներ FTI մրցույթի համար**

Իտալական ընկերությունը, որն արդեն արժանացել է “Seal of Excellence” –ին, ՓՄՁ գործիքի շրջանակներում, նախապատրաստում է առաջարկ Արագ ուղի նորարարության մրցույթի համար, որը տեղի կունենա 2019թ.-ի մայիսին: Ընկերությունը փնտրում է 2 տեխնոլոգիական գործընկերներ՝ կոնսորցիումը համալրելու նպատակով:

Ծածկագիր. RDIT20190226001

**Դանուբ միջազգային ծրագիր: Որոնվում են կլաստերներ, ՀԿ-ներ, հասարակական մարմիններ և այլն, որոնք նորարարության/կրթության ոլորտում փորձ ունեն՝ որպես գործընկեր մասնակից դառնալու ծրագրի գործունեությանը (քարտեզագրում, նորարարական գործիքների մշակում, և այլն):**

Բուլղարական հետազոտական կազմակերպությունը, որն աշխատում է նորարարության ոլորտում, մշակում է առաջարկ Դանուբյան ծրագրի համար: Դրա նպատակն է տրամադել մի շարք սոցիալական և նորարարական ծառայություններ, որոնք ուղղված են ավելի բարձր մակարդակի վրա պահելու ձեռնարկությունների պատասխանատվությունը արդյունաբերության 4.0 պահանջներին: Որոնվում են կազմակերպություններ, որոնք զբաղվում են սոցիալական ձեռնարկություններով, նորարարական ծառայություններ 4.0 Արդյունաբերության հմտությունների բացասական համատեքստով և կլաստերներ՝ մեխաթոնիկայի, ռոբոտաշինության, ավտոմատացման, բանացանցի և այլ ոլորտներում՝ աջակցելու ծրագրի գործունեությանը:



## Տեղեկատվական տեխնոլոգիաներ



### Գործարար համագործակցության առաջարկներ

Մակեդոնյան ՓՄՁ-ն առաջարկում է ՏՏ ծառայություններ պոտենցիալ գործընկերներին առևտրախնդի, ենթապայմանագրային և ծառայությունների մատուցման պայմանագրերով:

Մակեդոնյան ՓՄՁ-ն առաջարկում է ՏՏ ծառայություններ պոտենցիալ գործընկերներին առևտրախնդի, ենթապայմանագրային և ծառայությունների մատուցման պայմանագրերով: Մակեդոնյան ՏՏ-խորհրդատվական ընկերությունն առաջարկում է համագործակցություն օտարերկրյա գործընկերներին առևտրախնդի, ենթապայմանագրային և ծառայությունների պայմանագրերի ներքո: Ընկերությունն առաջարկում է ՏՏ ծառայությունների ամբողջական փաթեթ:

Ծածկագիր. BOMK20170331001

**ՓՄՁ-ն Միացյալ Թագավորությունից առաջարկում է կոմպլեքս լուծումներ՝ պատվերով ծրագրային ապահովման մշակման համար:**

Ծրագրեր մշակող ընկերությունը Միացյալ Թագավորությունից մասնագիտացած է «վերջնական» պատվերով արվող ծրագրեր և փնտրում է ծառայությունների համաձայնագրեր այն գործընկերների հետ, ովքեր պահանջարկ ունեն բարելավելու իրենց ներքին գործընթացները և/կամ բարելավելու համար իրենց համակարգերը:

Ծածկագիր. BOUK20190204001

**Ուկրաինական ՏՏ ոլորտի մատակարարը փնտրում է գլոբալ գործընկերներ, գլոբալ ՏՏ ծառայություններ մատուցողներ կամ այլ S2S ընկերություններ՝ համագործակցելու համար**



## որպես պրոֆեսիոնալ կապալառու

Մանագիտացած ուկրաինական ցանցային ինտեգրատորը փնտրում է գլոբալ գործընկերներ, գլոբալ SS ոլորտի մատակարարներ կամ այլ S2S ընկերություններ՝ Ուկրաինայում համագործակցելու համար որպես պրոֆեսիոնալ կապալառու :

Ծածկագիր. BRUA20170807001

## Կոսմետիկա



## Գործարար համագործակցության առաջարկներ

**Ֆրանսիական օրգանական բուսական օճառ արտադրողը ցանկանում է երկարատև արտադրության պայմանագիր կնքել:**

Ֆրանսիական ընկերությունը մասնագիտացած է արհեստական օճառի արտադրանքով և մտադիր է մշակել օրգանական բուսական յուղից պատրաստված օճառի նոր շարք: Ընկերությունը փնտրում է արտադրողի՝ երկարատև արտադրության պայմանագրի ներքո համագործակցության նպատակով:

Ծածկագիր. BRFR20190111001

**Մասնավոր պիտակով կոսմետիկա արտադրողը Լեհաստանից, փնտրում է գործընկերներ, ովքեր հետաքրքրված են ենթապայմանագրային արտադրական գործընթացով:**

Լեհական ընկերությունը, որը լավ հայտնի է մասնավոր պիտակով արտադրվող իր կոսմետիկայով, փնտրում է ընկերություններ, ովքեր հետաքրքրված են իրենց կոսմետիկայի մասնակի կամ ամբողջական արտադրությամբ՝ արտադրական, աութսորսինգային կամ

## Առողջապահություն



### Գործարար համագործակցության առաջարկներ

**Ֆրանսիական ընկերությունը, որն արտադրում է բժշկական սարքավորումներ, փնտրում է դիստրիբյուտորներ իր նորարարական շնչառական արտադրանքի համար**

Լավ հաստատված ֆրանսիական ընկերությունը, որը հանդիսանում է բժշկական պարագաների արտադրողը և դիստրիբյուտոր, ցանկանում է ընդլայնել իր գործունեությունը արտերկրում՝ իր շնչառական ապրանքների համար: Շնճառական այդ բաժինը բաղկացած է բարձրորակ և որակյալ ապրանքներից՝ օքսիգենային թերապիայի (O2 խթանիչներ, մոնիտորինգի համակարգեր, օքսիմետրեր և շնչառական օրթոպեդիայի համար) և շնչառական օրթոպեդիայի համար (նորարարական սարքավորումներ թոքային ֆունկցիայի և թոքային վարժությունների համար): Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ:

Ծածկագիր. BOFR20190205001

## Գործարար համագործակցության հարցումներ

Ռումինական ընկերությունը փնտրում է բժշկական սարքավորումներ և բնական կոսմետիկա՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո

Բժշկական սարքավորումներ և բնական կոսմետիկա արտադրող լեհական ընկերությունը ցանկանում է ընդլայնել իր պորտֆելը և փնտրում է նման ապրանքների օտարերկրյա մատակարարներ: Համագործակցությունը կարող է հիմնված լինել տարածման ծառայությունների համաձայնագրերի վրա:

Ծածկագիր. BRPL20190111001

## Այլ ոլորտներ



Business Support on Your Doorstep

## Գործարար համագործակցության առաջարկներ

Թուրքական ընկերությունը, որը զբաղվում է լոգաստենյակի կահույքի նախագծմամբ և արտադրությամբ, ներառյալ պահեստներ, պահարաններ, աքսեսուարներ և այլ լոգաստենյակային պարագաներ, փնտրում է դիստրիբյուտորների, ինչպես նաև առաջարկում է աշխատել արտադրական համաձայնագրի ներքո:

Ընկերությունը ցանկանում է համագործակցել տարածման ծառայությունների մատուցման պայմանագրի ներքո՝ իր վաճառքը միջազգային շուկայում ընդլայնելու նպատակով: Ընկերությունն ունի ազատ արտադրական հզորություն և առաջարկում է աութօրսինգային պայմանագրեր կահույքի ոլորտում գործող այն ընկերություններին, որոնք պատրաստ են աշխատել արտադրական համաձայնագրի ներքո լոգաստենյակների պարագաների

արտադրության համար:

Ծածկագիր. BOTR20190128001

**Լիտվական ինժեներական ընկերությունը ներգրավված է արդյունաբերական ավտոմատացման նախագծերում և դրանց իրականացման մեջ:**

Ընկերությունը փնտրում է երկարաժամկետ համագործակցություն ընկերությունների հետ, որոնք իրականացնում են տարատեսակ տեխնոլոգիական գործընթացներ և/կամ արտադրում են արդյունաբերական սարքավորումներ տարբեր տեխնոլոգիական գործընթացների համար, որոնք են՝ զանգվածային նյութեր, նավթ, գազ, սննդամթերք, խմիչքներ, ջուր և արդյունաբերության այլ ոլորտներ, իչպես նաև հետաքրքրված է այլ փոքր ավտոմատացման լուծումներով:

Ծածկագիր. BOLT20181016001

**Գործարար համագործակցության հարցումներ**

**Ֆրանսիական ընկերությունն արտադրական համաձայնագրերի ներքո փնտրում է բնական և անուշաբույր մոմեր արտադրողներ**

Ֆրանսիական ընկերությունն արտադրում և տարածում է ֆրանսիական շուկայում բուրավետ և դեկորատիվ մոմեր: Ընկերությունը փնտրում է բուսական հումքով պատրաստված 100% բնական մոմ արտադրող գործընկերոջ: Երկարաժամկետ գործընկերոջ հետ առաջարկվում է աշխատել արտադրական համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. BRFR20190219001

**Ֆրանսիական ընկերությունը փնտրում է ապակե շշեր արտադրող:**

Ագրոբիզնեսում մասնագիտացած երիտասարդ ֆրանսիական ընկերությունն արտադրում է թարմ և առողջարար հյութեր: Ընկերությունը իր թարմ հյութի համար փնտրում է 20 սանտիլիտրանոց ապակե շշերի արդյունաբերական արտադրողի: Արտադրության պայմանագիր կնքելու համար պահանջվում է երկարաժամկետ արտադրող-գործընկեր:


Ծածկագիր. BRFR20190117001

**Ընկերությունը փնտրում է մինօբսիդիլ արտադրող տղամարդկանց մազերի վերականգնման նոր արտադրանքի համար**

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից մշակել է մագերն աճեցնելու նոր արտադրատեսակների շղթա և փնտրում է մինօքսիդիլի փրփուր (գոյություն ունեցող փրփուր ապրանքանիշի ընդհանուր տարբերակ) արտադրող՝ ամբողջական դարձնելու համար իր մատակարարման շղթան: Ընկերությունը փնտրում է քիմիական ընկերություններ կամ դեղեր արտադրողներ՝ արտադրական համաձայնագրերի ներքո իրենց բաղադրիչները մատակարարելու համար:

Ծածկագիր. BRUK20190125001

## Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



### Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

**Կապարի հայտաբերումը բուսական ծագման սննդի մեջ՝ կիրառելով սառեցնող-չորացնող, ուլտրաձայնային օժանդակությամբ արդյունահանման և գրաֆիտե վառարանների ատոմային կլանման մեթոդները**

Ռումինական հետազոտական ինստիտուտը, որը մասնագիտացած է վերլուծական քիմիայի հետզոտության և մշակման ոլորտում, անալիտիկ քիմիայի ոլորտում մշակել է մեթոդ՝ հայտնաբերելու համար կապարի պարունակությունը բուսական ծագման սննդի մեջ, որն օգտակար է սննդի որակի և անվտանգության ոլորտի կիրառման համար: Այժմ մեթոդը մշակման/լաբորատոր փուլում է: Ինստիտուտը փնտրում է գործընկերներ, ինչպես օրինակ՝ սննդի որակի և անվտանգության, բնապահպանության և քիմիայի ոլորտից գործընկերներ՝ հաստատելու համար համագործակցության համաձայնագրեր:

## Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

**Մերբազմազան ընկերությունը, որը մասնագիտացած է ներքին և արտաքին ցուցանակների ոլորտում, փնտրում է գործընկերներ տեխնոլոգիայի, LED 3D նշանների ոլորտում տեխնիկական համագործակցության համար:**

Մերբազմազան ընկերությունը, որը մասնագիտացած է արտաքին և ներքին ցուցանակների, վահանակների, նշանների և գովազդային նյութերի նախագծմամբ և արտադրությամբ, փնտրում է նոր գործընկերների, որոնք ունեն հզոր արտադրողականություն (կարողություն) և 3D LED նշանների նոս-հաու տեխնոլոգիաներ: Ընկերությունը փնտրում է գործընկերների, որոնք փորձ ունեն ցուցանակների/վահանակների ոլորտում LED տեխնոլոգիաների գործարկման հարցում: Արտադրության մեջ LED տեխնոլոգիայով 3D պատկերների լուսավորված տառերի և նշանների տեսքով:

Ծածկագիր. TRRS20181016001

**Նոր նյութ, որը կհեշտացնի պոլիտեֆինների ստեղծումը, արտադրությունը և վերամշակումը**

Ընկերությունը Միացյալ Թագավորությունի եվրոպական մեկ այլ ընկերություն համատեղ փնտրում են նոր տեխնոլոգիաներ՝ պոլիտեֆինների և պոլիուրեթի արտադրության դյուրացման և ֆունկցիոնալության բարելավման համար: Նյութերը պետք է ունենան ապացուցված հայեցակարգ և նրանք պետք է հնարավորություն ունենան կիրառվելու շուկայում, այդ թվում՝ շինարարություն, սննդի, առողջապահություն, ավտոմոբիլային ոլորտներում: Կախված մշակման փուլից՝ համաձայնագրերը կարող են ներառել՝ լիցենզավորում, համատեղ ձեռնարկություն, տեխնիկական կամ առևտրային համաձայնագրեր՝ տեխնիկական աջակցությամբ:

Ծածկագիր. TRUK20190201001

## Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են և 2019 թ. -ի մարտ ամսվա ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

### Մարտ

<p>06/03/2019</p>	<p><b>Brokerage event for Industry 4.0 @ Global Industrie in Lyon, France</b></p> <p><b>Լիոն (Ֆրանսիա)</b></p> <p>Այս ֆորումն ուղղված կլինի տեխնոլոգիայի տեսլականի և լուծումների, նոր բիզնես մոդելների վրա: Südtirol-ից և արտասահմանից ժամանած ընկերությունների ելույթներում կներկայացվեն խաչաձև ճյուղային ջանքերի իրենց լավագույն փորձը: Կեսօրին նախատեսված է փորձագետների և ընկերությունների միջև համաժողով, որին կհաջորդի Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում իրականացվող համագործակցության հաստատման միջոցառումը. այն հնարավորություն կտա ընկերություններին հանդիպելու և բանակցելու:</p> <p><a href="https://www.global-industrie.com/en">https://www.global-industrie.com/en</a></p>
<p>29/03/2018</p>	<p><b>B2B meetings at DATE 2019 in Florence</b></p> <p><b>Ֆլորենցիա</b></p> <p><b>(Իտալիա)</b></p> <p>Այս միջոցառման հիմնական ոլորտներն են՝ տեխնոլոգա և համակարգեր, վերականգնվող էներգիայի ապարատներ, ներկառուցվող համակարգեր և ծրագրեր...</p> <p><a href="https://www.tetramax.eu/">https://www.tetramax.eu/</a></p>



Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁեՑ Հայաստան:

**Նշում:** *Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել Ձեռնարկությունների եվրոպական ցանց Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:*

*Հարգելի գործարար,*

*Գրանցվեք հետևյալ հղմամբ՝*

*<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար*

*հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:*

*Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:*

Այս տեղեկաթերթի մեջ տեսակետները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ արտահայտեն Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալության, Եվրոպական Հանձնաժողովի կամ այլ եվրոպական կառույցների տեսակետը: Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալությունը, Եվրոպական Հանձնաժողովը կամ դրանց կողմից գործող որևէ անձ պատասխանատու չէ տեղեկաթերթում պարունակվող բովանդակությունն օգտագործվելու դեպքում: